ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30/2016 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՐՍՊՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐԻ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Երևան <<31>> հունվարի 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Բաղասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

1.4 Սույն Պայմանագրով սահմանված 2016 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կատարված աշխատանքների համար վճարումը կիրականացվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2. 1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 147 067 250 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 122 075 465 (մեկ հարյուր քսաներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների 2016 թվականի համար

ընդհանուր գինը կազմում է 24 991 785 (քսանչորս միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
Կենտրոնական Գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 02565518	01567429
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30/2016 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2016թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
[redacted]						
1	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	**11,012,936,0**	**48,739,183,0**	**43,323,718,0**	**18,999,628,0**	**122,075,465,0**
2	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների	**4,998,357,0**	**7,497,536,0**	**6,247,946,0**	**6,247,946,0**	**24,991,785,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀ 900011012136
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀ 163007045608
ՀԿՀՀ 01567429

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< >> հունվարի 2016թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30/2016 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

ՀՀ	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների	7,709,055,0	7,709,055,0	7,709,055,0	42,693,405,0	42,693,405,0	42,693,405,0	90,078,721,0	90,078,721,0	90,078,721,0	122,075,465,0	122,075,465,0	122,075,465,0	122,075,465,0
2	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների	3,332,238,0	3,332,238,0	3,332,238,0	9,996,714,0	9,996,714,0	9,996,714,0	16,661,190,0	16,661,190,0	16,661,190,0	24,991,785,0	24,991,785,0	24,991,785,0	24,991,785,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀ 900011012136
ՀԿՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎ 163007045608
ՀԿՀՀ 01567429

(ստորագրություն)

Կ.Տ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՐՍՊՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐԻ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30»

«21» դեկտեմբեր 2015թ.

ք. Երևան

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Բաղասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 31.12.2020թ.-ի ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 /քառասուն/ օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 147 067 250 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 122 075 465 (մեկ հարյուր քսաներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,
- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների 2016 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 24 991 785 (քսանչորս միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 2017 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները կազմված՝ 13 էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
Կենտրոնական Գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 02505518	ՀՎՀՀ 01567429
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 1
«21» դեկտեմբերի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում,

ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 և N 1.2 հավելվածների:

II. Ձեռքբերման պայմաններ

1. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է 5 տարի՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
Կենտրոնական Գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 01567429
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1.1

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1-ի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սանմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 34,8-կմ47,3	Միջպետական I	12,50		Լավ	12,50	229,406	2867,575
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 47,3-կմ65,4	Միջպետական II-IV	18,10		Լավ	18,10	161,935	2931,024
Շահումյանի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	2,70		Միջին	2,70	156,537	422,650
Ոսկետապի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,85		Միջին	0,85	156,537	133,056
Ավշարի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,53		Միջին	0,53	156,537	82,965
Արարատի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,61		Միջին	0,61	156,537	95,488
Հ8, Երևան-Արտաշատ-Ագևան-Մ2 կմ 28,7-կմ42,6	Հանրապետական II-IV	13,90		Լավ	13,90	156,537	2175,864
Հ-0, Մ2-Հ8-Ոսկետափ-Վեդի-Լանջար-Մ2 կմ0-կմ25	Հանրապետական II-IV	25,00		Միջին	25,00	118,167	2954,175
Մոտեցում Խոր Վիրապին կմ0-կմ1,7	Հանրապետական II-IV	1,70		Միջին	1,70	118,167	200,885
Հ11, Մ2- Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 կմ0-կմ16.1	Հանրապետական II-IV	16,10		Միջին	16,10	118,167	1902,489
Ընդամենը		91,99			91,99		13766,170
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ34,8-կմ47,3	Միջպետական I	12,50	Լավ ՄԼ(I)	Միջին	12,50	1512,352	18904,400
Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ47,3-կմ65,4	Միջպետական II-IV	18,10	Բավարար ՄԲ(II)	Միջին	18,10	1504,648	27234,130

Շահումյանի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	2,70	Բավարար ՀԲ(II)	Միջին	2,70	1504,648	4062,550
Ոսկետապի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,85	Բավարար ՀԲ(II)	Միջին	0,85	1504,648	1278,951
Ավշարի տրանսպորտային հանգույց	Միջպետական II-IV	0,53	Բավարար ՀԲ(II)	Միջին	0,53	1504,648	797,463
Արարատի տրանսպորտային հանգույց	Հանրապետական I-IV	0,61	Բավարար ՀԲ(II)	Միջին	0,61	1356,657	827,562
Հ8, Երևան-Արտաշատ-Ագևան-Մ2 կմ 28,7-կմ42,6	Հանրապետական II-IV	13,90	Բավարար ՄԲ(II)	Միջին	13,90	1356,657	18857,532
Հ10, Հ8-Ոսկետափ-Վեդի-Լանջար-Մ2 կմ0-կմ25	Հանրապետական II-IV	25,00	Լավ ՀԼ(I)	Միջին	25,00	596,461	14911,525
Հ11, Մոտեցում Խոր Վիրապին կմ0- կմ1,7	Հանրապետական II-IV	1,70	Բավարար ՀԲ(II)	Միջին	1,70	1356,657	2306,318
Հ-11, Մ2- Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 կմ0-կմ16.1	Հանրապետական II-IV	16,10	Բավարար ՀԲ(II)	Միջին	14,10	1356,657	19128,864
Ընդամենը		91,99			89,99		108309,295
				Ընդամենը Արարատ 1-ի տարածաշրջանով			122075,465

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀ 163007045608
ՀՎՀՀ 01567429

(ստորագրություն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1-ի տարածաշրջան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ

I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	507.511		
Լավ ՄԼ (I)	1287.168	1260.293	
Բավարար ՄԲ (II)		1487.596	1387.854

Շեմ N 6. Աղյուսակ 6.1

II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	414.167		
Լավ ՄԼ (I)	861.478	847.754	
Բավարար ՄԲ (II)		1253.873	1147.890

II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՄԵ	378.344		
Լավ ՄԼ (I)	556.211	497.051	
Բավարար ՄԲ (II)		1130.548	1100.963

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (Հազ. ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
I տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	191.172	184.711	175.877
II-IV տեխնիկական կարգի միջպետական նշանակության ավտոճանապարհներ	134.946	130.448	126.465
II-IV տեխնիկական կարգի հանրապետական նշանակության ավտոճանապարհներ	130.448	98.472	91.478

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

(ստորագրություն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Աշխատանքի անվանումը - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ

1.2. Նշանակությունը (խնդիրը) - Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանում

1.3. Հիմքը - Անվտանգության ապահովում

1.4. Ֆինանսավորման աղբյուրը - Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

1.5. Աշխատանքի կատարման ժամկետը - 2016թ.-ի հունվարի 1-ից մինչև 2020թ.- ի դեկտեմբերի 31-ը

1.6. Պատվիրատու - Հ Հ տրանսպորտի և կապի նախարարություն

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման հիմնական խնդիրն է՝ մշտապես ապահովել կառույցի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

2.Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման հիմնական սկզբունքն է՝ պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) վնասվածքների առաջացման կանխարգելումը, վթարների հետևանքով առաջացած վնասվածքների վերացումը, գործող տեխնիկական նորմաներից շեղված պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) գործող տեխնիկական նորմաներին համապատասխանեցնելը և ընթացիկ խնամքը:

3.Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

1) Զննումների և դիտարկումների պարբերական իրականացում: Զննումները և դիտարկումները պետք է կատարվեն կապալառուի կողմից պարբերաբար՝ շաբաթը մեկ անգամ:: Կապալառուն պարտավոր է գրանցումներ կատարել պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման մատյանում, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զննման արդյունքում հայտնաբերված անսարքությունները կամ թերությունները վերացնելու ուղղությամբ, երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների դեպքում, շտապ (մեկ ժամվա ընթացքում) զեկուցել պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

2) Հսկողության ապահովում: Հսկողությունն իրականացնում է կապալառուն՝ առնվազն շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները) գրանցում է կապալառուի պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման մատյանում ու ստորագրում է:

Իրականացվող զննումների և հսկողության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) ամրացմանը պյուներին, եզրերի թեքված մասերին, մակերևույթի հարթությանը, նրա վրա տեղադրված լուսային անդրադարձիչներին, ներկմանը, տեղադրման համապատասխանությանը գործող տեխնիկական նորմաներին: Զննման ժամանակ անհրաժեշտ է պիկետաժավորել և քարտեզագրել առկա բոլոր թերությունները:

Հեղյուս- մանեկային և եռակցման միջոցով կատարված միացությունների թերությունների առկայության դեպքում դրանք համարակալվում են և գրանցվում պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման մատյանում:

3) Խնամքի և ընթացիկ նորոգման ապահովում: Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) կոնստրուկտիվ տարրերի ընթացիկ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է՝ կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը և շարքից դուրս գալը: Այդ նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները:

Որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, արտաքին մակերևույթի վրա առաջացած թերությունների, վթարների կամ թափվածքների, սողանքների ու սելավների հետևանքով առաջացած վնասվածքների վերացման աշխատանքները:

4.Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման կապալառու կազմակերպությունը պարտավոր է վարել պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների մատյան, որը պետք է լինի կարված, համարակալված էջերով և պատվիրատուի կողմից կնքված: Մատյանը պետք է պահվի կապալառու կազմակերպության գրասենյակում և տրամադրվի տվյալ ավտոմոբիլային ճանապարհի պետական կառավարման մարմնի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության լիազոր ներկայացուցիչներին՝ պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ գրանցելու նպատակով: Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնին և/կամ տվյալ պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանումը իրականացնող կազմակերպությանն իրազեկել պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) վիճակի մասին:

5.Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքները ընդունվում են հետևյալ կերպ՝

ա) Պահպանման միջանկյալ դիտարկում

Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման միջանկյալ դիտարկումներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երեք անգամ: Միջանկյալ դիտարկման ժամանակ ստուգվում է պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման համապատասխանությունը պահպանման պահանջներին և առկա թերություններն արձանագրվում են պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների միջանկյալ դիտարկման ամփոփագրում: Արձանագրված թերությունները և դրանց վերացման ժամկետները գրանցվում են նաև պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների մատյանում: Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման միջանկյալ դիտարկման ամփոփագրում և պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների մատյանում գրանցումների հիման վրա կատարվում է պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը:

բ) Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում

Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունումը իրականացվում է մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա յոթերորդ աշխատանքային օրը: Հիմնվելով միջանկյալ դիտարկումների արդյունքների վրա, կատարվում է պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման գնահատումը՝ արդյունքները ձևակերպելով պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ընդունման ամսական ամփոփագրում:

6. Պատվիրատուի պասխանատուի կողմից պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են պահպանման պահանջները:

7. Պատվիրատուի պասխանատուի կողմից պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքները ընդունվում և տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի կողմից վճարվում են մասնակիորեն՝ աղյուսակ N1-ում բերված տոկոսաչափերով նվազեցումով, եթե պահպանման պահանջները լիարժեք ապահովված չեն:

Աղյուսակ N 1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

	Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) կոնստրուկտիվ տարրեր, թերություններ և դրանց վերացման պահանջվող առավելագույն ժամկետ	Թերությունը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցներ) պահպանման արժեքից պակասեցվող %
1	Ամրացման սյուների թեքվածություն, ծռվածություն, բացակայություն՝ ընդհանուր քանակից 5 % ավել (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*15*
2	Ամրացման հանգույցների հեղյուս- մանեկ միացության	*15*

	բացակայություն, ոչ բավարար ձգվածություն, եռակցման կարերի անընդհատության խախտում (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	
3	Մետաղական հորիզոնական թիթեղների ծռվածություն, կոտրվածք, միացման հատվածներում եռակցման կարերի ընդհատվածություն, միջինը 1 ք.մ. մակերեսի վրա 100 ք.սմ-ից ավել կոռոզիայի ենթարկված հատվածներ (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*20*
4	Լուսային անդրադարձիչների բացակայություն, վնասվածք, խամրում՝ ընդհանուր քանակի 3%-ից ավել (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝1 օր)	*10*
5	Մակերևույթների ոչ ամրողջական ներկված լինելը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝5 օր)	*15*
6	Պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) բարձրության անհամապատասխանությունը նորմաներին՝ ընդհանուր երկարության 5% ավելի վրա (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 5 օր)	*10*
7	Եզրային մեկ թիթեղի բացակայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 օր)	*15*

II. Հայաստանի Հանրապետության պետական (միջպետական և հանրապետական) նշանակության ավտոճանապարհների պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը (2016 թ.-ի համար)

(ՀՀ դրամ)

N	Սարքեր	Պահպանում			1 գծմ նորոգման միավորի գինը	Ընդամենը
		գծմ	Միավորի գինը	Գումար		
1.	Արարատի	18 309	1365	24 991 785	6750	24 991 785

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
«21» դեկտեմբերի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-30
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____ և
Պատվիրատուն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը
նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«21» դեկտեմբերի 2015թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30»

«14» դեկտեմբեր 2015 թ.

ք. Երևան

«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Մ. Բաղասարյանի (անձնագիր AH 0671988, տրված է 24.09.2008թ. 008 ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների ձեռքբերման «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարմանից հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429

տնօրեն՝ Մ. Բաղասարյան
_____(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝
_____(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅԱՆԱԳԻՐ **N 1**

"__" _____ 20 թ.

Վճարող՝ <<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ ՀՎՀՀ - 01567429	ԴԵԲԵՏ 163007045608	ԳՈՒՄԱՐ 14706725
Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) տասնչորս միլիոն յոթ հարյուր վեց հազար յոթ հարյուր քսանհինգ ՀՀ դրամ
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518		
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	հշ.N 900005000758	

Գումարը բառերով՝ տասնչորս միլիոն յոթ հարյուր վեց հազար յոթ հարյուր քսանհինգ ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1

Վճարման նպատակը
պայմանագրի կատարման ապահովում, տուժանքի մասին համաձայնություն՝ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՄԻԳ-16/1-30

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /Մ. Բաղասարյան/ /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ